ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿԱ-ԾՁԲ-15/2 ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԿԱ-ԾՁԲ-15/2 ծածկագրով 2015թ-ի փետրվարի 4-ին կնքված պայմանագրում 2015թ-ի հոկտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը.

ՀՀ կառավարության աշխատակազմի շենքերում տեղադրված անվտանգության համակարգի սպասարկման անհրաժեշտություն՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին:

Փոփոխության նկարագրություն.

Ծառայությունների ծավալների և մատուցման ժամկետի ավելացում:

Փոփոխության հիմնավորում.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը:

Պատվիրատու՝ ***<u>Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ</u>***

գնումների համակարգող՝ Հայկ Խաչատրյան

Հեռախոս՝ 51-59-89

Էլ. փոստ՝ gnumner@gov.am

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

04.02.2015թ. կնքված N «ՀՀԿԱ-ԾՁԲ-15/2» ծածկագրով պետության կարիքների համար անվտանգության համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «30» հոկտեմբեր 2015թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷլլիպսՋիէյ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Զաքարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 04.02.2015թ. կնքված N «ՀՀԿԱ-ԾՁԲ-15/2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «1350000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար)» բառերը փոխարինել «1450000 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար)» բառերով:

1.2 Պայմանագրի 4.1 կետի 2-րդ նախադասությունում «ՀՀ դրամ» բառից հետո լրացնել «իսկ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներինը՝ ընդհանուր 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.3 Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում լրացնել «Կատարողը պատասխանատվություն չի կրում նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում խափանված տեսախցիկների (որոնք ենթակա չեն նորոգման) համար:» նախադասությունը, իսկ ծառայության մատուցման ժամկետի ավարտը սահմանել 24.12.2015թ.-ը:

1.4 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակներում «1,350.0» թվերը փոխարինել «1,450.0» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«ԷլլիպսՋիէյ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	Ք. Երևան, Ն. Տիգրանյան 27
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 20500-2211337
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00067177
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ info@sec.am
/ Դ. Բեգլարյան /	/ Ա. Զաքարյան /